ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 14.06.2019թ. հ.01/273 գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր ցանցի ներդրման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների չափորոշիչները ներկայումս գտնվում են քննարկման փուլում և ենթակա են հաստատման Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների մասնագիտական աշխատանքային խմբի կողմից: Ներկայացված նոր տրանսպորտային ցանցը և չափորոշիչները կներկայացվեն հանրային քննարկման և դրանց վերջնական հաստատումից հետո նոր կկազմակերպվի տրանսպորտային միջոցների գնումների մրցույթ՝ ըստ համապատասխան ընթացակարգերի:

Քննարկման ներկայացված չափորոշիչները ներառում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության տեխնիկական պահանջներ: Մասնավորապես.

- անվասայլակների՝ վերելակային համակարգով կամ թեքահարթակով համալրվածություն,
- հաշմանդամների անվասայլակների կամ մանկասայլակների համար հատուկ տեղեր,
- կանգառների ազդարարման համակարգի առկայություն,
- ավտոբուսներում սրահի բարձրախոսի, արտաքին և ներքին էլեկտրոնային տեղեկատվական ցուցանակների առկայություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ